ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«4» 04 2016թ.
ՊՀ/510-550

2/1582-16
05.04.16թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Ա. ԹԱԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թաթոյան

Ձեր քննարկմանն է ներկայացվում <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը:

Խնդրում եմ օրենքի նախագծի վերաբերյալ Ձեր դիտողությունները և առաջարկությունները հնարավորին սեղմ ժամկետում ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն:

Առդիր՝ 11 թերթ:

Հարգանքով՝

Ս. ՕՀԱՆՅԱՆ

Կատ. Ս. Սիմոնյան
հեռ 294-423
ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԻՑ ՄՈՒՏ 2/-103
«05» 04 2016թ.

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-99 օրենքի 1-ին հոդվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի>> (այսուհետ՝ Կանոնագիրք) 8-րդ հոդվածում <<պաշտոնեական>> բառից հետո լրացնել <<կամ հատուկ>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Կանոնագրքի 65-րդ հոդվածի երրորդ պարբերությունում <<(մեծերը)>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 3. Կանոնագրքի 67-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում <<(մեծը)>> բառը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

<<Հրամանատարի (պետի) կամ ավագի հարցմանը հաստատական պատասխան տալու դեպքում զինծառայողը պատասխանում է՝ <<Ճիշտ այդպես>>, իսկ ժխտողական պատասխանի դեպքում՝ <<Ոչ մի կերպ>>:

ՀՈԴՎԱԾ 4. Կանոնագրքի 71-րդ հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Զինծառայողների միասնական համազգեստի, զինվորական տարբերանշանների ձևերը և դրանց նկարագրերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>:

ՀՈԴՎԱԾ 5. Կանոնագրքի 78-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում <<պարտավոր է>> բառերից առաջ լրացնել <<պատասխանատու է ենթակա անձնակազմի կողմից զինվորական ծառայության անվտանգության պահանջների կատարման համար և>>.

2) երրորդ պարբերությունում <<Անձնակազմի զոհվելը և խեղվելը կանխելու>> բառերը փոխարինել <<Զինվորական ծառայության անվտանգության>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 6. 92-րդ հոդվածի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունում <<պետը>> բառից հետո լրացնել <<(հաստիքով նախատեսված լինելու դեպքում)>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 7. Կանոնագրքի 93-րդ հոդվածի առաջին պարբերությունում <<պահպանման>> բառից հետո լրացնել <<, զինվորական ծառայության անվտանգության ապահովման միջոցառումների կազմակերպման>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 8. Կանոնագրքի 94.2-րդ հոդվածի առաջին պարբերության 4-րդ մասում <<գործընթացը,>> բառից հետո լրացնել <<վերահսկել մարտական հերթապահությունում զինվորական ծառայության անվտանգության ապահովման միջոցառումների կատարումը,>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 9. Կանոնագրքի 96-րդ հոդվածի առաջին պարբերությունում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<- մշակել գնդի մարտական պատրաստության պլան, գնդի տեղաբաշխման վայրի պահպանության և պաշտպանության պլան, վերահսկել դրանց կատարումը, կազմել օրվա վերակարգի (ներքին պահակախմբերի) բաշխման տեղեկագիրը, վերակարգերում ընդգրկվող սպաների և ենթասպաների հերթապահության ամենամսյա ժամանակացույցը, ինչպես նաև գնդի պայմանագրային զինվորական ծառայության սպայական և ենթասպայական կազմերի զինծառայողների արձակուրդների ժամանակացույցը.>>.

2) 12-րդ մասում <<պահակապետին>> բառից հետո լրացնել <<, հերթապահ ստորաբաժանման հրամանատարին>> բառերը.

3) 15-րդ մասում <<ծառայացուցակը>> բառը փոխարինել <<տեղեկամատյանը>> բառով.

4) 16-րդ մասում <<հսկել>> բառից առաջ լրացնել <<մասնակցել գնդում զինվորական ծառայության անվտանգության ապահովման միջոցառումների մշակմանն ու իրականացմանը,>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 10. Կանոնագրքի 99-րդ հոդվածի առաջին նախադասությունում <<պատրաստության,>> բառից հետո լրացնել <<զինվորական ծառայության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացման,>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 11. Կանոնագրքի 100-րդ հոդվածի առաջին պարբերությունում՝

1) 1-ին մասում <<պլանների>> բառը փոխարինել <<, գնդի տեղաբաշխման վայրի պահպանության և պաշտպանության պլանների, զինվորական ծառայության անվտանգության ապահովման միջոցառումների>> բառերով.

2) 10-րդ մասում <<հերթապահին>> բառից հետո լրացնել <<, ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ մեթոդագործնական պարապմունք անցկացնել հավաքակայանի

հերթապահ նշանակվող զինծառայողների հետ՝ հատուկ պարտականությունների կատարման կարգի վերաբերյալ>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 12. Կանոնագրքի 101-րդ հոդվածի առաջին նախադասությունում <<պատրաստականության,>> բառից հետո լրացնել <<զինվորական ծառայության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացման,>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 13. Կանոնագրքի 102-րդ հոդվածի առաջին պարբերությունում՝

1) 4-րդ մասում <<զինծառայողի>> բառից հետո լրացնել <<, ներառյալ օրվա վերակարգում ընդգրկվածներին,>> բառերով.

2) 8-րդ մասում <<հերթապահին>> բառից հետո լրացնել <<, ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ մեթոդագործնական պարապմունք անցկացնել ճաշարանի հերթապահ նշանակվող զինծառայողների հետ՝ հատուկ պարտականությունների կատարման կարգի վերաբերյալ>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 14. Կանոնագրքի 158-րդ հոդվածի առաջին պարբերության 8-րդ մասում <<կատարել>> բառից հետո լրացնել <<զինվորական ծառայության>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 15. Կանոնագրքի 160-րդ հոդվածի առաջին պարբերությունում՝

1) 4-րդ և 5-րդ մասերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<- մարտական հերթապահության (մարտական ծառայության) և օրվա վերակարգում ծառայության օրինակելի կատարումով.

- օրվա կարգացուցակի և ծառայության բաշխման կարգի ճշգրիտ կատարումով.>>.

2) 7-րդ մասում <<հակահրդեհային>> բառից առաջ լրացնել <<զինվորական ծառայության և>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 16. Կանոնագրքի 188-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերության առաջին նախադասությունում <<ամենօրյա>> բառից հետո լրացնել <<առավոտյան>> բառը.

2) երկրորդ պարբերությունում <<խոզանակով կամ>> և <<, դեռ երեկոյան ջուր լցնել լվացարանները, մաքրել աղբամանները, իսկ ծխարաններում, դրանից բացի, դրանց մեջ ջուր կամ վարակազերծիչ հեղուկ լցնել>> բառերը հանել.

3) երրորդ պարբերությունում <<Պարապմունքների>> բառը փոխարինել <<Առավոտյան մաքրումից հետո և պարապմունքների>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 17. Կանոնագրքի 194-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում.

ա. առաջին նախադասությունում <<տեղակայման շրջանը>> բառերը փոխարինել <<տարածքը>> բառով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Ստորաբաժանումներին կցված տարածքների ընդհանուր մաքրումն իրականացվում է շաբաթական առնվազն մեկ անգամ:>>.

2) երկրորդ պարբերությունում.

ա. առաջին նախադասությունում <<տեղակայման շրջանը>> բառերը փոխարինել <<և զինվորական ավանի տարածքները>> բառերով,

բ. երրորդ նախադասությունում <<հարթակների>> բառից հետո լրացնել <<կամ վերամբարձ աշտարակների>> բառերը.

3) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Ստորաբաժանմանն ամրակցված տեխնիկայի կայանմամբ տարածքների մաքրումն իրականացվում է տվյալ ստորաբաժանման անձնակազմի ուժերով՝ օրվա կարգացուցակով նախատեսված սպառազինության և ռազմական տեխնիկայի խնամքի ժամին: Տեխնիկական (պահեստների) տարածքների մաքրումն իրականացվում է գնդի հրամանատարի հրամանով այդ տարածքներում աշխատելու թույլտվություն ունեցող ստորաբաժանումների անձնակազմի ուժերով: Գնդի և զինվորական ավանի տարածքների մաքրումը կատարվում է օրվա վերակարգի և ճաշից հետո առանձնացված խմբերի ուժերով: Հավաքակայանային-տնտեսական օրը, ըստ օրվա պլանի, գնդի և զինվորական ավանի տարածքների մաքրման համար առանձնացվում են խմբեր կամ ստորաբաժանումներ:>>:

ՀՈԴՎԱԾ 18. Կանոնագրքի 244-րդ հոդվածին հաջորդող վերնագրում <<ԳՆԴԻ>> բառից առաջ լրացնել <<ԿԱՅԱԶՈՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԵՎ>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 19. Կանոնագրքի 245-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Հոդված 245. Պայմանագրային զինծառայողներն օրվա ծառայության ավարտից հետո, ինչպես նաև հանգստյան և տոնական օրերին իրավունք ունեն ազատ տեղաշարժվելու կայազորի սահմաններում և կայազորի սահմաններից դուրս: Ընդ որում, կայազորի սահմաններից դուրս գալու դեպքում պայմանագրային զինծառայողը պարտավոր է այդ մասին բանավոր կամ գրավոր տեղեկացնել իր անմիջական հրամանատարին (պետին): Ժամկետային պարտադիր զինծառայողները, սույն Կանոնագրքի 246-րդ հոդվածով սահմանված կարգով, կարող են ազատ տեղաշարժվել կայազորի սահմաններում, իսկ կայազորի սահմաններից կարող են դուրս գալ միայն օրենքով սահմանված կարգով արձակուրդի կամ գործուղման կամ բուժման վայր մեկնելիս:>>:

ՀՈԴՎԱԾ 20. Կանոնագրքի 268-րդ հոդվածի երրորդ պարբերության առաջին նախադասությունում <<զորամասերում>> բառից հետո լրացնել <<սերժանտական կազմից

նշանակված հավաքակայանի հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը, ինչպես նաև>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 21. Կանոնագրքի 292-րդ հոդվածի երկրորդ պարբերության առաջին նախադասությունում <<ինչպես նաև գնդի շտաբի և ծառայությունների>> բառերը փոխարինել <<Մարտական դրոշի ապակեպատ տարածքը՝ ստուգելով հրշեջ ազդարարման և ձայնաազդանշանային համակարգերը, ինչպես նաև գնդի վարչության>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 22. Կանոնագրքի 294-րդ հոդվածի առաջին պարբերության 16-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<- գնդի հրամանատարի ժամանման դեպքում դիմավորել նրա, տալ <<Զգա՛ստ>> հրաման և զեկուցել:>>:

ՀՈԴՎԱԾ 23. Կանոնագրքի 308-րդ հոդվածի առաջին պարբերության 3-րդ մասում <<կարգը,>> բառից հետո լրացնել <<վաշտի մարտական հաշվարկը,>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 24. Կանոնագրքի 352-րդ հոդվածի վեցերորդ պարբերության երկրորդ նախադասությունում <<ավագը>> բառից հետո լրացնել <<կամ վաշտի սանհրահանգիչը>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 25. Կանոնագրքի 353-րդ հոդվածի առաջին պարբերության երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Զինծառայողները ծառայողական պարտականություններից կամ պարապմունքներից լրիվ կամ մասնակիորեն ազատվում են գնդի հրամանատարի հրամանով՝ հիմք ընդունելով հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումը կամ զորամասի բժշկի (բուժակի) եզրակացությունը:>>:

ՀՈԴՎԱԾ 26. Կանոնագրքի 398-րդ հոդվածի երկրորդ պարբերության առաջին նախադասությունում՝

1) <<զորամասերում>> բառից հետո լրացնել <<(ստորաբաժանումներում)>> բառերը.

2) <<պահպանման>> բառից հետո լրացնել <<և զինվորական ծառայության անվտանգության>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 27. Կանոնագրքի 410-րդ հոդվածում <<և պետական>> բառերից առաջ լրացնել <<կամ Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 28. Կանոնագրքի 441-րդ հոդվածում <<զորամասի,>> բառից հետո լրացնել <<միավորման,>> բառը:

ՀՈԴՎԱԾ 29. Կանոնագրքի 442-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում <<շտաբի պետը, հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների, սպառազինության, թիկունքի գծով>> բառերը փոխարինել <<հրամանատարի>> բառով:

ՀՈԴՎԱԾ 30. Կանոնագրքի 445-րդ հոդվածի առաջին նախադասությունում <<յուրաքանչյուր ամիս>> բառերը փոխարինել <<երեք ամիսը մեկ անգամ>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 31. Կանոնագրքի 446-րդ հոդվածի 2-րդ կետում <<ամենամսյա>> բառը հանել:

ՀՈԴՎԱԾ 32. Կանոնագրքի 1-ին հավելվածի 5-րդ կետի առաջին պարբերության առաջին նախադասությունում <<զորամասը>> բառից հետո լրացնել <<Հայաստանի Հանրապետության պետական դրոշով,>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 33. Կանոնագրքի 2-րդ հավելվածում՝

1) 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Զորամասի մարտական դրոշի կանոնադրությունը, մարտական դրոշի նկարագիրը և մարտական դրոշի վկայագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:>>.

2) ուժը կորցրած ճանաչել 3-րդ կետի երկրորդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 34. Կանոնագրքի 3-րդ հավելվածում՝

1) 3-րդ կետի երկրորդ նախադասությունում <<տրվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի պահպանագիրը>> բառերը փոխարինել <<տրվում է նաև մարտական դրոշի վկայագիրը>> բառերով.

2) 8-րդ կետի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Մարտական դրոշը հանձնողն ընթերցում է մարտական դրոշի վկայագիրը, որից հետո մարտական դրոշը և մարտական դրոշի վկայագիրը փոխանցում է զորամասի հրամանատարին:>>.

3) 9-րդ կետի առաջին նախադասությունում <<պահպանագիրը>> բառը փոխարինել <<մարտական դրոշի վկայագիրը>> բառերով.

4) 17-րդ կետի երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Շքանշանը հանձնող անձը զորաշարքի առջև ընթերցում է զորամասը շքանշանով պարգևատրելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը, որից հետո հրամանագիրը և շքանշանի վկայականը հանձնում է զորամասի հրամանատարին, իսկ շքանշանն ամրացնում է մարտական դրոշին:>>.

5) 19-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Նշված դեպքում ընթերցվում է Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ զորամասը շքանշանով պարգևատրելու մասին, որից հետո ընթերցվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանը՝ զորամասին մարտական դրոշ հանձնելու մասին:>>.

6) 25-րդ կետում <<պահակության>> բառը հանել.

7) 26-րդ կետում՝

ա. առաջին պարբերությունում <<պահակակետում>> բառը փոխարինել <<զորամասի շտաբում տեղադրվում է ապակեպատ տարածքում և>> բառերով, իսկ <<վիճակում>> բառից հետո լրացնել <<(կամ բաց վիճակում՝ ապակեպատ պահարանի առկայության դեպքում)>> բառերը,

բ. երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Մարտական դրոշի ապակեպատ տարածքը պետք է սարքավորված լինի հրշեջ ազդարարման և ձայնաազդանշանային համակարգերով, որոնք միացվում են զորամասի հերթապահի կառավարման վահանակին: Զորամասի հրամանատարի հրամանով, տոնական օրերին, մարտական դրոշի ապակեպատ տարածքի դիմաց կարող է կարգվել ժամանակի՝ երկու հերթափոխով, առավել պատրաստված զինծառայողներից:>>,

գ. երրորդ պարբերությունում <<պահակակետում փակցվում են>> բառերը փոխարինել <<ապակեպատ տարածքի ներսում տեղադրվում են>> բառերով.

8) 28-րդ կետի երկրորդ պարբերության առաջին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<շաբաթվա ընթացքում առնվազն մեկ անգամ ստուգել մարտական դրոշի պահպանության գործընթացը,>>.

9) 29-րդ կետում՝

ա. առաջին պարբերության առաջին նախադասությունում <<պետը>> բառից հետո լրացնել <<՝ զորամասի հերթապահի,>> բառերը,

բ. երկրորդ պարբերությունում <<հանձնում պահակության պահպանմանը>> բառերը փոխարինել <<տեղադրվում է ապակեպատ տարածքում>> բառերով.

10) 34-րդ կետում՝

ա. առաջին պարբերության առաջին նախադասությունում <<իրային ծառայության>> բառերը հանել,

բ. երկրորդ պարբերությունում <<թիկունք>> բառը փոխարինել <<իրավասու ծառայություն>> բառերով.

գ. երրորդ պարբերությունում <<թիկունքը>> բառը փոխարինել <<իրավասու ծառայությունը>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 35. Կանոնագրքի 11-րդ հավելվածում՝

1) 3-րդ կետում <<հաջորդականությունը>> բառից հետո լրացնել <<, սննդի մատակարարումը կայազորային պահակախմբերին>> բառերը.

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<4. Բարոյահոգեբանական ապահովումը:>>.

3) 5-րդ կետում <<Դաստիարակչական, կուլտուրժամանցային աշխատանքների կատարման կարգը,>> բառերը հանել.

4) 9-րդ կետում <<պատվոգրքի>> բառը փոխարինել <<Պատվո գրքի և Պատմական տեղեկամատյանի>> բառերով.

5) 21-րդ կետում <<անցկացման>> բառը փոխարինել <<ամփոփման>> բառով.

6) երկրորդ պարբերության առաջին մասում <<օրվա>> բառից առաջ լրացնել <<օրվա կարգացուցակը և>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 36. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքը, բացառությամբ 4-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածը, 33-րդ հոդվածը, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 152-րդ և 153-րդ հոդվածներն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքում զինվորական ծառայության անվտանգության ապահովման գործընթացում հրամանատարների պարտականությունների ավելացման, օրվա վերակարգի, հերթապահ ստորաբաժանումների, հսկիչ-անցագրային կետերի կողմից ծառայության իրականացման, զինծառայողների տեղաշարժի, մարտական դրոշի օգտագործման հետ կապված հարաբերությունների հստակեցման, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հետ կապված օրենքի մի շարք դրույթների վերանայման անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս հրամանատարի պարտականությունները սահմանող հոդվածներում նախատեսված չեն զինվորական ծառայության անվտանգության ապահովման ընդհանուր պարտավորությունները, օրվա վերակարգի, հերթապահ ստորաբաժանումների, հսկիչ-անցագրային կետերի կողմից ծառայության պատշաճ կազմակերպման ու իրականացման, զինծառայողների տեղաշարժի, մարտական դրոշի պահպանման և օգտագործման գործընթացում առաջ են գալիս խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության փոփոխություններին համահունչ, ներքին ծառայության կանոնագրքում վերանայման կարիք ունեն զինծառայողների համազգեստի և տարբերանշանների, զորամասի մարտական դրոշի նկարագրի հաստատման ու զորամասին հանձնման հետ կապված դրույթները:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Ապահովել Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայության անվտանգությունը, պատասխանատու պաշտոնատար անձանց և ստորաբաժանումների իրավասությունների հստակ շրջանակը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Օրենքի նախագծով հստակեցվում են զինվորական ծառայության անվտանգության ապահովման, զորամասում զինվորական ծառայության կազմակերպման և իրականացման հետ կապված պաշտոնատար անձանց ու զինծառայողների իրավասությունները և պարտականությունները, մարտական դրոշի պահպանման և օգտագործման կարգը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի զորքերի ծառայության վարչությունների կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Ապահովել զինված ուժերում ներքին ծառայության պատշաճ կազմակերպման ու իրականացման գործընթացը, այդ ուղղությամբ պաշտոնատար անձանց և զինծառայողների իրավասությունների հստակ շրջանակը:

7. Այլ տեղեկություններ չկան:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	**ընթացիկ (n-րդ) տարի**		Հաջորդող 3 տարիները		
			n +1	**n +2**	**n +3**
	Ըստ n - րդ տարվա պետական բյուջեի	փոխու-թյունը n - րդ տարվա պետական բյուջեի համեմատ	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1.Եկամուտներ	Չկա	-	-	-	-
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր	Չկա	-	-	-	-
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական	Չկա	-	-	-	-
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Չկա				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	Չկա				

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Օրենքի նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հրապարակային քննարկման ներկայացնելու և դրա արդյունքում արված առաջարկությունների վերաբերյալ

1. Օրենքի նախագիծը տեղադրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական ինտերնետային կայք էջում՝ www.mil.am հասցեով:

2. Նախագծի վերաբերյալ էլեկտրոնային կամ գրավոր եղանակով դիտողություններ կամ առաջարկություններ չեն ներկայացվել: